

մեր մէջ վարժութիւն, վարժապետ, վարժարան,
վարժել բառերը Սանատրուկի որդւցն Երտաչէս
մանկանը իւր դաշեակը Ամբատ Բազրատունին ա-
զատեց Երուանդայ սուրէն : Լուսաւորիչը ունէր
գայեակ Սովիիա անուն, որ նրան երեխայութեան
ժամանակը փախցրեց Կեսարիա : Տրդատին՝ իւր
դաշեակը՝ Արտաւաղդ Մանգակունին տարաւ Հը-
ռոմ, և Հայոց թագաւորութեանն հասոյց : Լէոն
Գ Հայոց Կիլիկեցոց թագաւորը ունէր գաստիա-
րակ զնոստանդին Կաթողիկոսն, որոյ ձեռամք զը-
րած աւետարանն կայ ի Նոր Նախիջևան : Բայց
վարձկան մայրագրի և հայրագրի անյաջող ընտ-
րութիւնը՝ բազմից ունեցել է և վատ հետևանք,
որ ըստ մեծի մասին երևել է երեխի բնաւորութեան
խանգարմանց մէջ, և յետագայ տարիները ի յայտ
են եկել : Ի հարկէ այս կապատահի այնպիսի երե-
խանց՝ որ իւրեանց ծնողաց ջանակուռ հսկողու-
թենէն և վերատեսչութենէն զրկուած են և իս-
պառ թողած են այն վարձկաններին ապաստան:
Խօսք չկայ, որ շատ սակաւ ծնողք կան՝ որ հաս-
կացած լինին և հասկանան թէ իւրեանց ծայրա-
գյն ծնողական պարտաւորութիւնն այն է, որ շատ
աւելիք աչքը բաց և զգուշաւոր զգաստութեամբ
և ճշգութեամբ նային այն վարձկան գաստիարակ-
ների վերայ, որ այն անմեղ զաւակաց մնունդը
գեռ ևս իւրեանց կենաց առաջին տարիքներումը
վատ հետևանքներ չգուշակէ. և լաւ իմանան՝ որ
միայն իրանց անձնական ազգեցութեամբ կարէ ե-
րեխայն աջողակ զարգանալ. մօր ազգեցութեան
տակ կկաղմակերպուին նորա զգացմունքը և երե-
ւակերպութիւնքը. իսկ հօր ազգեցութեան տակ՝
կհաստատուին և ուժ կառնուն նորա միտքն, իսկը-
քը և կամքը :

(Մանաւան է յերաշայու)

ՊԱՆԴՈՒԽՈՏ.

Քնարիս կողքին պառկած եմ տխուր,
Մատերս անզօր են ձայն տալ լարերուն.
Յանկարծ զարթնում է մի քաղցր յիշատակ
Սրտում ալեկոծ վշտից տարութեր:

Եւ այդ մայրական քնկոյշ օրօ՛՛ներ,
Որ ոգեսրում ձեռքերս գողգոջուն,
Լարեր հնչումն ալս շատ կաթոգին,
Եւ արտասուքս առատ հոսումնեն:

Ո՞չ, ի՞նչ սրբանուէր բոպէք խնկելի,
Պատկերանումն հոգուս առաջն.
Որոց մէջ յաձախ համբոյրն մայրական
Սրբել արցունքներ մատաղ օրերին
Բայց ո՞չ, ո՞ւր թռան այդ անզին ժամեր . . .
Տարան իւրեանց հետ կենսատու վայելք . . .
Նոցա փոխարին կեակքի դառնութիւն
Լի գժոխային թռանաւոր նետով:

Կրումեմ օտար ափերում դժբաղդ
Անձուկ բռուն ի վիշտս յաւէտ բարդի բարդ ...
Աւաղ Հայրենիք սիրուն Հայաստան
Վեհից զիւցազանց փառաց օթևան:

Եւ ծոց մայրենի անոյշ ինձ համար
Քան թէ օտարի փառք ու մեծարանք. . .
Որոյ կարօտը պիտ' երկար մաշէ
Զիս վատարաղդ տար աշխարհներում:

ԳՐԵԴԻՆ ՏԵՐ Ե-ԱԳԵԱՆ
Խօօջայ Ա-Ա-ՅԱ-ԳԵ-ԱՆ-Յ:

ՅԵՐԵՒԱ:

ԱՌ ԱՅԳԵՊԱՆ

Ո՞վ այցեպան բազմախնամ քրտնաջան,
Ա՞ռ ինչ զտունկադ ոռոգանես բարեջան:
Հոգաս բրես շուրջ զդովաւ անդադար,
Ցուսաս պտուղ քաղել այտի հիմքարար,
Այո, քանզի Ճիփն թափեմ և ցանկամ,
Զի ընկալայց զախորժ պտուղ քաղցրահամ:
Որք զպաքեալ զովացուսցեն զիմ բերան,
ԶԴմետրեան ձնից եղէց գոհարան,
Ո՞չ, եթէ ոչ կատարեսցի քոյդ փափագ,
Զի՞նչ գու առնես ընդ ծառդ ընդ այն սին պիտակ,
Յայնժամ և ես տապարահար ի կործան,
Արկից տարայց հրցն մատնեցից ի բերան,
Սապէս և մեք, Հայր Ա-Ե-ՀԱ-ՓԻ-Ա-Ն-Յ:
Ծառք եմք տնկեալ դպրոցական ի գաւթիւն,
Քև զարմանեալ քո խնամօքդ ծաղկեցուք,
Քո օրհնութեամբ բեղմնաւորիլ կարացուք:

Զիսայրիս երկանց իմոց քրտանց առաջին,
Քեզ նուիրեմ ես ի հեռուստ սրտագին։
Հլինել այզի Խորայելեան անրերին։
Չառալ պտղոց փոխան ըղիուշ վայրենի։
Այլ խնամօքդ այզեպանիդ բարելցան։
Քեզ զարդասցուք յընթացս ու տման շահեկան։
Մեք քեզ որդիք երախտապարտ յախտեան։
Զքեզ օրէնեսցուք յաւերդ ի ձայն զգոհութեան։

ԱՆ ԵՐ. ԴԱ. ՍՐ. Հ. Դ.

Դար. Հայ. Պատրիարքութ-

ԵԿԱ-ՀԱ-ԱՆ. ԱՊՐԻԼ. ԹԱԿԱ-ՀԵ-Ա-Ն. Դ.

Ի Շ-Հ-Հ:

ԹՈՅՆԻ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ 02520.3Ն07.

ՆԱՐ Հ.Ա.Օ.Բ.

Յետագայ տեղեկութիւնը այս օրերս
կարդացի և հարկաւոր համարեցի հաղոր-
դել մանաւանդ զիւղական քահանանե-
րին և նոցա միջնորդութեամբ զիւղացի
քնակիչներին։ Կիտրօնը (լիմոն), ինչպէս
երեւումէ, թոյնի ներգործութիւնն ոչըն-
չացնելու և նորանից նախապաշտպանելու
յատկութիւն ունի։ Ենդիւական Խթհի-
նէում օրագիրը պատմումէ Խզիպտոսի
մէջ նկատված մի դէպք։ Խըկու յանցա-
ւորներն դատապարտված էին ի մահ թու-
նաւոր օձերի միջնորդութեամբ։ Խըր նո-
ցա պատժելու էին տանում, ցաւակից կին
մի նոցա քանի մի կիտրօններ տուեց, որ և
կերան նոքա։ Խըր այնուհետեւ յանցա-
ւորները աւար յանձնվեցան ամենաթու-
նաւոր օձերին, նոքա անվաս մնացին։
Կահանդապետը շատ զարմացաւ այս գոր-
ծի վերա և միւս օր նորէն ուղարկեց նո-
ցա պատժելու, և կիտրօնի ներգործու-
թեան մասին համոզվել յանկանալով,

կիտրօնը կերցըեց յանցաւորներից մինին,
իսկ միւսին—ոչ։ Փաստը հաստատվեցաւ.
նա, որ կերել էր կիտրօնը, կենդանի մնաց,
իսկ միւսը մեռաւ օձի թոյնից։

Վա.աւել հաստատելու համար կարօղ
եմ դարձեալ հաղորդել Փրանսիական զօ-
րական պ. Աաշեից նկարագրված փաստ մի,
որ բնակումէր Փրանսիական գաղթակա-
նութիւնների մէջ։ “1848 թուին, պատ-
մումէ Աաշէ իւր յիշատակաթերթերի
մէջ, —կառավարութիւնը պատուիրեց նո-
րէն շինել Ենդիւայինների ձեռովկ կործան-
ված Դէզէ ամրոցը Մարտինիկի մէջ։
Իմզօրագունդը բանումէր խրամների մէջ։
Մի զինուորին կծել էր զեղին օձ։ Աս կան-
չեցի երդմնեցուցիչը։ Կծելիով նա լսյնա-
ցրեց կծած տեղի վերքը և քամեց նորա
մէջ կիտրօնի հիւթ։ Յետոյ նա հրամայեց
զինուորին մի բաժակ ձիթենու ձէթ խմել
և յետոյ նոյնչափ բօմ։ Վայնուհետեւ նա
պատուիրեց զրաղեցնել հիւանդը զրօսան-
քով կամ ուրիշ կերպով և իւրաքանչիւր
կէս ժամից տալիս էր նորան խմելու կիտ-
րօնի հիւթ։ Կծած տեղի ուռոցը սկսեց
նշմարելի կերպով ռչնչանալ և միւս օրը
ամենաշնչին չետքերն միայն մնացին, :
Աաշէի ինդրով օձերի երդմնեցուցիչը ցոյց
տուեց կիտրօնի հիւթի ներգործութիւնը
օձի թոյնի վերա, օձին կծել տալով բա-
նանի պատուզը։ Օձի կծելուց յետ կիտրօ-
նի հիւթի ներգործութեանը ենթարկված
բանանը սկացաւ։ Թէկ այս տեսակ փառ
տերը գեռ ևս մեկնված չեն, սակայն նոց
նշանակութիւնը այնքան մեծէ, որ ուսու-
նականներն հարկաւոր համարեցին պար-
պել նոցա հետազօտութեանն։

Ա. Ա.